ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք. Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. уч. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. si.Artcvacar, tel. (093) 19-66-68

Էլ. փոստ.arman-erem@mail.ru

№ 03-15/113

«09» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Դավթյանին

«ԻՋՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով «ՀՀ Տավուշի մարզի Դեղձավանի դպրոցի տանիքի վերանորոգում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 7267,98 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 2 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«09» սեպտեմբերի 2015թ.
Տնօրեն՝

Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ «ՀՀ Տավուշի մարզի Դեղձավանի դպրոցի տանիքի վերանորոգում» աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ Տավուշի մարզպետարան Նախագծող՝ «ԻԶՆԱՍ» ՍՊԸ

Նախագծման հիմք է ծառայում Դեղձավանի գյուղապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

Տանիք

1. Գլխավոր մուտքի ե/բ հովհարի տանիքի վերանորոգում 0,55մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից, նոր փայտե կարկասի և կավարամածի կառուցումով ,
2. Դպրոցի տանիքի ծածկի թիթեղի ամրացում, մասնակիորեն փայտե կարկասի փոխարինում նորով և կավարամածի խտացում,
3. Տանիքի գոյություն ունեցող ցվիկի փայտանյութի մասնակի փոխարինում նորով,
4. Տանիքի ամբողջ պարագծով ցվիկի երեսապատում 0,55մմ հաստությամբ ցինկապատ հարթ թիթեղով,
5. Ամբողջ տանիքի փայտե կոնստրուկցիաների, կավարամածի և ցվիկի հրապաշտպանություն.

Գլխավոր մուտք.

1. Ե/բ հովհարի առաստաղի գաջե սվաղի մաքրում և սվաղում ճակատային ծեփամածիկով,
2. Գլխավոր մուտքի արտաքին տուֆե պատերի հղկում,
3. Գոյություն ունեցող փայտե դռների լաքապատում և հին ներդիր կողպեքների փոխարինում նորերով,

Նախամուտքի

1. Նախամուտքի փայտե դռների փոխարինում մ/պլ դռներով, պատերի և առաստաղի գաջե սվաղի նորոգում և ներկում լատեքսային ներկով,

Դահլիճ

1. Դահլիճում փայտե դռների և պատուհանների փոխարինում մ/պլ դռներով և պատուհաններով: Պատերի և առաստաղի գաջե սվաղի նորոգում և ներկում լատեքսային ներկով: Գոյություն ունեցող փայտե պատուհանագոգերի փոխարինում պլաստմասե պատուհանագոգերով,

Սանհանգույց

1. Սանհանգույցում փայտե պատուհանի և դռան փոխարինում մ/պլ դռնով և պատուհանով: Հախճասալի փոխարինում նորով: Գոյություն ունեցող 50մմ և 100մմ տրամագծի կոյուղու թուջե խողովակաշարի փոխարինում պոլիվինիլքլորիդե 50 և 110 մմ տրամագծի խողովակաշարով: Զուգարանակոնքերի և լվացարանի փոխարինում նորով: Հատակների հիդրոմեկուսացում տոլով, խեցեսալե սալիկների փոխարինում նորերով, հոսնոցի տեղադրում: Ներքին էլեկտրալուսավորության ցանցի կառուցում: Ներքին ջրամատակարարման ցանցի կառուցում 20մմ տրամագծի պոլիպրոպիլենային խողովակով:

Արտաքին կոյուղու

1. Արտաքին կոյուղու անցկացում 110մմ տրամագծի պոլիվինիլքլորիդե խողովակով:

Ներկայացված է նախահաշիվ *7267,98* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06

«Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

*« << Տավուշի մարզի Դեղձավանի դպրոցի տանիքի վերանորոգում »* աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *7267,98* հազ. դրամ. ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ Մ. Աղդալյան

Գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան